նել դատաստան ըստ Օրինաց հայոց 'ի վերայ գործոց ձեռաց իւրոց, և կրկին եթէ կամի ելանել ստացուածոց իւրոց առ աշխարհն իւր որում ժամանակի որ ինքն կամեսցի հատուցանել պարտէ տասանորդ ստացուածոց իւրոց, և մնացորդն ազատ լինի տանելոյ ուր որ ինքն կամեսցի։

ԳԼՈՒԽ ՃԻԹ.

Մի՛ որ իշխեսցի նախատանօք և կամ հայհոյութեամբ բանալ բերանս իւր ընդ դէմ պատուոյ և պաշտելոյ առն ումեք ով որ իցէ։

ԳԼՈՒԽ ՃԼ.

Ստացուածք անձամբ աշխատեցեալ ամենայն արանց յետ մահուան իւրոյ եթէ գտանիցի կտակ ննջեցելոյն կատարումն առցէ 'ի վերայ բանին նորայ ըստ գրեցելոյ կտակին, եթէ ոչ ստացուածքն ննջեցելոյն բաժանեսցի 'ի վերայ մնացորդաց իւրոց։

Նախ ծախ թաղման ննջեցելոյն.

Երկրորդ վարձ բնակութեան տանն և վարձ սպասաւորաց։

Երրորդ ծախ պաշտօնէի, ըստ արժանոյ.

Չորրորդ կէսն 'ի բոլոր ստացուածոց կնոջն և կամ առն եթէ ոչ ունեսցեն զաւակ.